ՏԱԹԵՎԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դասախոս
https://orcid.org/0000-0001-6488-2717

ՏԻԳՐԱՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի ասպիրանտ
https://orcid.org/0000-0001-9265-2783

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ[1]

Հոդվածի հիմնական նպատակն է գնահատել և վերլուծել Արցախում միգրացիոն գործընթացները ժողովրդագրական համատեքստում: Հոդվածի կարևոր խնդիրը Արցախի և Հայաստանի մշտական բնակչության թվի, ինչպես նաև երկու հայկական պետություններում բնակչության տարեկան աճի տեմպի, բնական և մեխանիկական աճի, Արցախ եկողների և մեկնողների վերաբերյալ ցուցանիշների ուսումնասիրության արդյունքում միգրացիոն իրավիճակի համապարփակ վերլուծությունն է: Այս համատեքստում, համեմատական, համադրական պատմական շարքերի վերլուծության մեթոդների միջոցով հեղինակները ներկայացրել են տարիների ընթացքում Արցախում և Հայաստանում միգրացիոն գործընթացները՝ դրանք համադրելով ժողովրդագրական առումով տեղի ունեցող գործընթացների հետ: Արցախի և Հայաստանի մշտական բնակչության թվի շարժը ցույց է տվել, որ Արցախում մշտական բնակչության թվի միջին տարեկան աճի տեմպն ավելի բարձր է, քան Հայաստանում: Ընդ որում, նույնը կարելի է արձանագրել ինչպես բնական, այնպես էլ մեխանիկական

[1] Հոդվածը հրապարակվել է «Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամի կողմից ֆինանսավորվող հայագիտության վերաբերյալ կարճաժամկետ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում:

աճի ցուցանիշների դեպքում: Ընդհանուր առմամբ, Արցախի միգրացիոն իրավիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ միգրացիայի պատճառներն ու հետևանքները տարիների ընթացքում փոփոխվել են: Վերջին՝ ամենաէական գործոնը Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված 44-օրյա պատերազմն է, որի ազդեցությունը Արցախի բնակչության միգրացիոն տրամադրվածության վրա դեռ շարունակվում է:

Հիմնաբառեր. *Արցախ, Հայաստան, ժողովրդագրական իրավիճակ, միգրացիա, մշտական բնակչություն, բնական շարժ, մեխանիկական շարժ, 44-օրյա պատերազմ*

JEL: O15, R23
DOI: 10.52174/1829-0280_2022.2-146

Ներածություն: 21-րդ դարը կարելի է համարել միգրացիայի դար, քանի որ երբևէ այս երևույթը քաղաքական, տնտեսական և հասարակական նման հնչեղություն չէր ստացել: Մեծ նշանակություն ունի մարդկանց տեղաշարժի ուսումնասիրությունը, ինչը ստիպում է ուշադրություն դարձնել և վեր հանել այն խորքային պատճառները, որոնք հանգեցրել են միգրացիայի նման մեծ մասշտաբների: Համաշխարհային տնտեսության գլոբալացման արդի փուլում ոլորտային բոլոր առաջընթացներն ուղեկցվում են բնակչության տեղաշարժերով, որոնց պատճառներն են գործազրկությունը, աղքատությունը, սովը, աշխարհաքաղաքական անկայուն վիճակը, պատերազմները, բռնությունը և այլն: Այս համատեքստում, ինչպես Հայաստանը, այնպես էլ Արցախը, հատկապես 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմից հետո, բախվել են միգրացիոն լուրջ հիմնախնդրի: Երկարատև հակամարտությունները տնտեսական գործունեության բևեռացման են հանգեցնում, որոնք նվազեցնում են երկրի տնտեսական զարգացման հնարավորությունները: Այս առումով, արդեն 30 տարի ձգվող արցախյան հակամարտությունն անդրադարձել է Հայաստանի և Արցախի տնտեսական զարգացման ներուժի հնարավորություններին՝ ի հայտ բերելով երկու հայկական պետություններում միգրացիոն լուրջ հիմնախնդիր:

Գրականության ակնարկ: Միգրացիայի դրդապատճառները ժամանակի ընթացքում էական փոփոխությունների են ենթարկվել: Եթե 15-րդ դարի 50-ական թվականներից շահագործելու նպատակով Աֆրիկայից զանգվածաբար ստրուկներ են տեղահանել, ապա ժամանակակից աշխարհում մարդիկ հիմնականում դիմում են միգրացիայի իրենց սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման համար: Այսինքն՝ միգրացիայի ուղղվածությունը, հաճախականությունը, միգրացիոն հոսքերի կազմն ու կառուցվածքը, սոցիալ-տնտեսական և մշակութային հետևանքները յուրաքանչյուր ժամանակահատվածում ենթարկվել են փոփոխությունների:

Տնտեսագիտական գրականության մեջ չկա միասնական մոտեցում, ըստ որի հնարավոր լինի համապարփակ ներկայացնել «միգրացիա» եզրույթը: Ընդհանուր առմամբ, բավական դժվար է սահմանել «միգրացիա» և «միգրանտ» հասկացությունները: ՄԱԿ-ի փորձագետները կարծում են, որ միջազգային միգրանտն իր մշտական բնակության հասցեն փոխած անձն է՝ անկախ միգրացիայի դրդապատճառներից և օրինական կարգավիճակից: Տարբերակվում են կարճաժամկետ (3-12 ամիս) կամ ժամանակավոր և երկա-

ռաժամկետ (12 ամիս և ավելի) կամ մշտական միգրացիայի տեսակները[2]: Իրականում երևույթը շատ ավելի բարդ է, քանի որ միգրացիան ներառում է մարդկանց լայն շրջանակ՝ տարատեսակ պատմություններով: Երկրորդ՝ բավական խնդրահարույց է միգրացիայի վիճակագրության վարումը (նման խնդիր ունեն ինչպես Հայաստանը, այնպես էլ Արցախը): Այստեղ լուրջ խնդիր է ոչ միայն այն, թե երբ է մարդուն տրվում «միգրանտի» կարգավիճակ, այլև՝ թե երբ է այդ կարգավիճակը դադարեցվում:

Բնակչության միգրացիան ներառում է նաև աշխատուժի միգրացիան, սակայն տարբեր են դրանց նպատակները: Աշխատուժի միջազգային միգրացիան աշխատունակ բնակչության տեղաշարժն է տարբեր երկրներում՝ աշխատանք փնտրելու, սեփական կենսական հնարավորություններն իրացնելու և պայմանները բարելավելու նպատակով[3]: Աշխատանքայինից բացի, բնակչության միգրացիան կարող է ունենալ նաև այլ շարժառիթներ, սակայն տրամաբանությունը հուշում է, որ այլ երկրներում հանգրվանելու վերջնական նպատակն աշխատանք ունենալն է: Փաստորեն, անկախ միգրացիայի դիմելու դրդապատճառից, աշխատանք գտնելը դառնում է միջազգային միգրացիայի վերջնանպատակ:

Աշխատուժի միջազգային միգրացիայի դրդապատճառների հետաքրքիր մոտեցում է ներկայացված տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հ. Բագրատյանի «Մեգաէկոնոմիկա և գլոբալ տնտեսական խնդիրներ» աշխատությունում: Մասնավորապես՝ 21-րդ դարի սկզբին աշխարհի բնակչության 90%-ը դարձել է գրագետ, և մի շարք երկրների տնտեսություններ ի վիճակի չեն կլանելու գրագիտության այս մակարդակը, ինչը հանգեցրել է հատկապես երիտասարդների միգրացիոն հոսքերի դեպի աշխատանքային ռեսուրսների բացասական մնացորդ ունեցող երկրներ[4]:

Ժամանակակից աշխարհում որոշ երկրների տնտեսությունների մի զգալի հատվածն ուղղակի կախվածություն ունի աշխատող միգրանտներից և պարզապես կաթվածահար կլինի, եթե նրանք լքեն այդ երկրները: Վերլուծությունները փաստում են, որ Մեծ Բրիտանիայի տնտեսության համար միգրանտներն ավելի մեծ արժեք ունեն, քան Հյուսիսային ծովի նավթը[5]: Այդուհանդերձ, միգրացիան նաև մարտահրավեր է համաշխարհային տնտեսության համար՝ հաշվի առնելով հատկապես «միգրացիա» և «անվտանգություն» երևույթների միջև կապի բացահայտումը: Ընդ որում, 2001 թ. սեպտեմբերի 11-ի իրադարձություններից հետո համաշխարհային հանրության կողմից միգրացիայի և ահաբեկչության փոխկապվածության ընկալում կա: Ըստ այդմ՝ միգրացիան դարձել է ազգային անվտանգության հարցերին առնչվող երևույթ[6]:

---

[2] Տե՛ս United Nations, Recommendations on Statistics of International Migration, Revision 1, New York, 1998, էջ 10, https://unstats.un.org/unsd/publication/seriesm/seriesm_58rev1e.pdf

[3] Տե՛ս **Մարկոսյան Ա., Նազարյան Գ., Հախվերդյան Դ.,** Միջազգային տնտեսական հարաբերություններ// ուսումնական ձեռնարկ, 2 մասով,, մաս II, Եր., 2012, էջ 151:

[4] Տե՛ս **Багратян Г.А.**, Мегаэкономика и глобальные экономические проблемы: учебно-методическое пособие. Ер., Издательство РАУ, 2013, էջ 31:

[5] Տե՛ս **Koser Kh.,** International Migration: A Very Short Introduction, Oxford University Press, Great Clarendon Street, Oxford, United Kingdom, 2016, էջ 10:

[6] Տե՛ս International Organization for Migration, International Terrorism and Migration, Geneva, 2010, էջ 6:

Համաձայն Մեծ Բրիտանիայի Միդլսեքի համալսարանի EVI-MED նախագծի՝ միջերկրածովյան երկրների միգրացիոն ճգնաժամին վերաբերող զեկույցի՝ 80% դեպքերում արտագաղթի պատճառներն են պատերազմն ու բռնությունը[7]: Հատկանշական է նաև, որ միգրացիոն հիմնախնդիրը տեսաբանների և հետազոտողների ուշադրության կենտրոնում հայտնվել է հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո[8]՝ պայմանավորված պատերազմի հետևանքներով և դրանց հաղթահարման ուղիներ փնտրելով:

Մյուս կողմից՝ հակամարտությունների ավարտին հաջորդող ժամանակաշրջանը մի խումբ տեսաբաններ[9] անվանում են տնտեսական հնարավորությունների շրջան: Մասնավորապես՝ հակամարտող երկրների տնտեսական պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երկրում սկսվում է ենթակառուցվածքների շինարարություն՝ պայմանավորված պատերազմի վնասների վերացմամբ, ինչը հանգեցնում է պատերազմի ավարտից հետո տնտեսական աշխուժացման: Այս տեսանկյունից դիտարկելի է Կոսովոյի օրինակը, որտեղ 1998–1999 թվականների հակամարտությունից հետո տնտեսության ակտիվացման երկու հիմնական դրդապատճառ է արձանագրվել: Առաջին հերթին՝ կարևոր են շինարարական և վերակառուցման ուղղությամբ իրականացված աշխատանքները: Մյուս կողմից՝ մասնավոր հատվածում փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացումը, փոքրածավալ ներդրումների մեծ քանակն առևտրի և շինարարության մեջ տնտեսական կյանքում աշխուժություն են առաջացրել: Միևնույն ժամանակ, տնտեսական աճը Կոսովոյում դրամական փոխանցումների վրա էր հիմնված, որի հիմնական մատակարարները ինչպես միջազգային դոնոր կազմակերպություններն են, այնպես էլ սփյուռքը[10]:

Ընդհանուր առմամբ, միգրացիային առնչվող հետազոտություններն ու վերլուծությունները հստակ արձանագրել են, որ երկրները կարող են օգուտ քաղել միգրացիոն գործընթացներից՝ դրական ազդեցություն թողնելով ծագման երկրում աղքատության կրճատման և եկամուտների աճի վրա:

Այսպիսով՝ միգրացիայի դրդապատճառները բազմաթիվ են ու համակարգման դժվարությամբ ենթարկվող, քանի որ միշտ կարող է ի հայտ գալ երևույթ, որը կհանգեցնի միգրացիայի որոշման ընդունմանը: Այդուհանդերձ, պետք է ասել, որ միգրացիայի որոշումը ցանկացած միգրանտի համար բեկումնային է և ենթադրում է որոշակի սոցիալ-տնտեսական հետևանքներ: Միգրանտները ստիպված են լինում իրացման հնարավորություններ փնտրել նոր աշխատանքի շուկաներում, ինչը բարդ է, քանի որ առկա են ֆորմալ ու ոչ ֆորմալ ինստիտուտների հստակ տարբերություններ: Բավական լուրջ խնդիր է միգրանտների մասնագիտացման համապատասխանությունն ըն-

---

[7] «Причиной миграции в 80% случаев являются война и насилие», 14 июля 2017, https://tass.ru/plus-one/4415331?utm_source=google.com&utm_medium=organic&utm_campaign=google.com&utm_referrer=google.com

[8] Տե՛ս **Moon B.,** Paradigm in migration research: exploring morning as a schema. Progress in Human Geography, V.19, No. 4, 1995, էջ 505-506:

[9] Տե՛ս **Collier P.,** Post-conflict Recovery: How Should Strategies Be Distinctive? Journal of African Economies, Vol. 18, AERC suppl.1, 2009, էջ 99–131:

[10] Տե՛ս **Sklias P., Roukanas S.,** Development in Post-Conflict Kosovo, South-Eastern Europe Journal of Economics 2, 2007, էջ 272:

դունող երկրի աշխատանքի շուկայի պահանջներին: Իհարկե, որոշակի մասնագիտություններ (օրինակ՝ կոշկակարությունը, վարսահարդարությունը և այլն) համապիտանի են բոլոր երկրներում, սակայն եթե միգրանտի մասնագիտական որակավորումն ընդունելի չէ տվյալ երկրի աշխատանքի շուկայում (օրինակ՝ ուսուցչի, իրավաբանի և այլն), ապա առաջանում են վերապատրաստումներ անցնելու, լեզվի իմացության և բազմաթիվ այլ խնդիրներ: Մեր կարծիքով՝ միգրացիայի հետ կապված հիմնական բարդությունն այն է, որ դրա դեպքում ընդունող երկրի ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտները բախվում են ծագման երկրի ոչ ֆորմալ ինստիտուտներին: Սա առաջ է բերում մի շարք մարտահրավերներ ինչպես միգրանտի, այնպես էլ ընդունող միջավայրի համար: Միգրանտը, որոշակի մշակութային, սոցիալական և տնտեսական դրոշմ ունենալով իր վարքագծում, ընդունող երկրում ստիպված է լինում հաղթահարել մի շարք օրակարգային խնդիրներ:

Հետազոտության մեթոդաբանություն: Հետազոտության իրականացման մեթոդաբանական հիմքը երկրորդային տեղեկատվության հավաքագրման գործիքակազմի կիրառումն է: Հոդվածի համար երկրորդային տեղեկատվության հավաքագրման տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմք են ծառայել հայ և օտարազգի տնտեսագետների աշխատությունները, որոնք առնչվում են միգրացիոն գործընթացներին, տնտեսության վրա դրանց ազդեցությանն ու միգրացիոն հոսքերի կարգավորման անհրաժեշտությանը: Բացի այդ, օգտագործվել են նաև ոլորտը կարգավորող օրենսդրական ակտերը, համապատասխան միջազգային կազմակերպությունների հաշվետվությունները: Որպես տեղեկատվական աղբյուր են ծառայել Արցախի և Հայաստանի վիճակագրական մարմինների պաշտոնական հաշվետվությունները և շտեմարանները, հրապարակումները և ոլորտում մասնագիտացված գիտական հետազոտությունները:

Արցախում միգրացիոն գործընթացների ուսումնասիրության համար հոդվածում օգտագործվել են հիմնականում քանակական և որակական հետազոտական մեթոդներ: Բացի այդ, խնդիրը համակողմանի հասկանալու համար այս հետազոտության շրջանակներում հեղինակներն օգտագործել են վիճակագրական, մաթեմատիկական (գրաֆիկական), համեմատական և կառուցվածքային վերլուծության մեթոդները: Քանակական մեթոդների օգնությամբ հեղինակները կատարել են միգրացիոն իրավիճակի վիճակագրական վերլուծություն՝ իրենց հետազոտական հարցերի պատասխանը գտնելու համար: Այնուհետև, հիմք ընդունելով խնդրի քանակական վերլուծության արդյունքները, տրվել են իրավիճակը նկարագրող նաև որակական գնահատականներ:

Ընդհանուր առմամբ, տեսության մեջ օգտագործվում է երկու մեթոդ՝ *հիպոթետիկ-դեդուկտիվ,* որն օգտագործվում է հիմնականում նորդասական տնտեսագետների կողմից, և *պատմական-դեդուկտիվ,* որն առաջադրել են դասական և քեյնսյան տնտեսագետները: Թեև հետազոտական երկու մեթոդներն ունեն իրենց առավելությունները, այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ միգրացիոն հիմնահարցը կարևոր սոցիալ-տնտեսական խնդիր է, հեղինակներն ընտրել են պատմական-դեդուկտիվ մեթոդը:

Վերլուծություն: Հայաստանը և Արցախը նույնպես համաշխարհային միգրացիոն գործընթացների ակտիվ մասնակից են: Սկսած 1988 թ.՝ հայկական երկու պետությունների միգրացիոն իրավիճակը կտրուկ բեկվել է: Դա պայմանավորված է փոխկապակցված արտակարգ գործոններով՝ արցախյան հակամարտություն, երկրաշարժ, քաղաքական, սոցիալական և տնտեսական հեղափոխական անցումներ: 1991 թ. հունիսին հիմնահատակ կործանվել են Մարտակերտի և Հադրութի շրջանի 20-ից ավելի հայկական գյուղեր, սպանվել են հարյուրավոր մարդիկ, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի քաղաքներից ու գյուղերից շուրջ 450 հազար հայեր դարձել են փախստականներ: 1991–1994 թվականների ընթացքում Հայաստանից մոտ 550 հազար մարդ է հեռացել[11]: Բայց և այնպես, պետք է նշել, որ միգրացիային առնչվող վիճակագրությունը ինչպես Հայաստանում, այնպես էլ Արցախում բավական խնդրահարույց է:

2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Հայաստանի և Արցախի նկատմամբ սանձազերծված 44-օրյա պատերազմին հաջորդող իրադարձությունների լրջագույն հետևանքներից է բնակչության միգրացիան, ինչը պահանջում է համապարփակ վերլուծություն, խնդիրների և սպառնալիքների վերհանում, ինչպես նաև յուրահատուկ գործիքակազմ պարունակող լուծումների փաթեթի մշակում, որոնք կարող են կիրառվել Արցախի միգրացիոն պետական քաղաքականության մեջ: Առանցքային նշանակություն ունի նաև Արցախի ժողովրդագրական համայնապատկերի ուսումնասիրությունը, հնարավոր զարգացումների կանխատեսումն ու գնահատումը: Վերոնշյալ դիտարկումները հաշվի առնելով՝ հետպատերազմյան Արցախում միգրացիոն միտումների և ժողովրդագրական իրավիճակի գնահատումը արդիական է և կարևոր:

Գծապատկեր 1-ի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ Արցախի Հանրապետության մշտական բնակչության թվի տարեկան աճի տեմպը 2012–2020 թթ., միջին հաշվով, կազմել է 0,52%: Միևնույն ժամանակ, 1995 թվականի համեմատությամբ մշտական բնակչության թիվն Արցախում 2020 թվականին աճել է 21.4%-ով՝ կազմելով 148.8 հազար մարդ:

Արցախի մշտական բնակչության թվի ուսումնասիրության համատեքստում հատկանշական է, որ, 2016 թվականի ապրիլյան քառօրյա պատերազմից հետո, 2017 թվականին բնակչության թիվը նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 0.62%-ով: Պատկերն այլ է, սակայն, 2020 թվականի 44-օրյա պատերազմի պարագայում: Ըստ նախնական տվյալների՝ 2020 թվականի համեմատությամբ 2021 թվականին Արցախի մշտական բնակչության թիվը նվազել է 16.67%-ով՝ կազմելով 124 հազար մարդ: Բնակչության նվազման իրավիճակը հստակ կարելի է պայմանավորել 44-օրյա պատերազմի ցավալի ելքով, որի հետևանքով Ադրբեջանի կողմից օկուպացվել է Արցախի տարածքի 72%-ը՝ 11458 քառ. կմ-ի փոխարեն կազմելով 3170 քառ. կմ: Մասնավորապես՝ 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունից հետո պարզվել է, որ ԱՀ կազմում են մնացել մայրաքաղաք Ստեփանակեր-

[11] Տե՛ս **Միքայելյան Հ.,** Արտաքին միգրացիան Հայաստանում. միտումները, ուղղությունները, թվաքանակը, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6836#19_b

տը, Մարտակերտի շրջանի զգալի մասը, Մարտունու և Ասկերանի շրջանի մի մասը և Շուշիի շրջանի որոշ գյուղական համայնքներ:



Գծապատկեր 1. ***Արցախի Հանրապետության մշտական բնակչության թիվը 2012–2021 թթ. (հազար մարդ), Արցախի[12] և Հայաստանի[13] բնակչության տարեկան աճի տեմպը (%)***

Գծապատկեր 1-ում առկա տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ դիտարկվող ժամանակահատվածում, ի տարբերություն Արցախի, որտեղ մշտական բնակչության տարեկան աճի միջին տեմպը 2012–2020 թվականների ընթացքում կազմել է 0.52%, Հայաստանում նույն ժամանակահատվածում ցուցանիշը -0.26% է: Ըստ բնակչության բնակավայրերի բաշխվածության ուսումնասիրությամբ պարզվել է, որ քաղաքային բնակչության տեսակարար կշիռն ընդհանուր բնակչության թվում Արցախում 2012–2020 թվականներին, միջին հաշվով, կազմել է 55.6%, իսկ գյուղական բնակչությանը՝ 44.4%: Դիտարկվող 2012–2020 թվականների ընթացքում քաղաքային բնակչության թիվն աճել է տարեկան միջինը 1.5%-ով: Նույն ժամանակահատվածում գյուղական բնակչության թվի տարեկան աճի միջին տեմպը կազմել է -0.6%: Այս ցուցանիշը, համադրելով մշտական բնակչության թվի աննշան փոփոխության հետ, հիմք է տալիս եզրակացնելու, որ Արցախում գյուղական բնակավայրերից բնակչությունը դեպի քաղաքներ տեղաշարժվելու միտում է դրսևորել, ինչը դիտարկվում է որպես ներքին միգրացիայի դրսևորում:

Պետք է նշել, որ մինչև 2020 թվականի սեպտեմբերի 27-ը, համաձայն վարչատարածքային բաժանման միավորների դասակարգչի, Արցախի Հանրապետությունը բաղկացած էր 8 վարչական շրջաններից՝ առանձին շրջանի կարգավիճակ ունեցող մայրաքաղաք Ստեփանակերտ, Ասկերանի շրջան, Հադրութի շրջան, Մարտակերտի շրջան, Մարտունու շրջան, Շահումյանի շրջան (շրջկենտրոնը՝ Քարվաճառ), Շուշիի շրջան և Քաշաթաղի շրջան (շրջկենտրոնը՝ Բերձոր): ԱՀ մայրաքաղաք Ստեփանակերտի բնակչության թիվը, 2021 թվականին, 2020 թվականի համեմատությամբ, ավելացել է ավելի քան 10 հազարով: Միևնույն ժամանակ, համաձայն ԱՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տվյալների, 2021 թվականին ԱՀ օկուպացված տարածքներից տեղահանված 38 հազար քա-

[12] Տե՛ս Արցախի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն, http://www.stat-nkr.am/

[13] Տե՛ս Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, https://armstat.am/am/

ղաքացիներից 16 հազարը վերադարձել է Արցախ[14]: Ընդ որում, Արցախ վերադարձածների համար իրականացվել են փոքր դրամաշնորհային ծրագրեր՝ ինքնազբաղվածության ապահովման նպատակով: ԱՀ Կառավարությունը նախատեսել է նաև խոշոր ներդրումներ իրականացնել տեքստիլ և վերամշակող արդյունաբերության մեջ՝ նոր աշխատատեղերի ստեղծման համար: Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի ներկայացրած տվյալների՝ Արցախից տեղահանվածների թիվն ավելի քան 91 հազար է. 80%-ը պատերազմի ավարտից հետո վերադարձել է Արցախ: Բացի Ստեփանակերտից, 2020 թվականի համեմատությամբ 2021 թվականին բնակչության թվի ավելացում արձանագրվել է նաև Ասկերան, Մարտունի և Մարտակերտ քաղաքներում: Համաձայն Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիայի կողմից իրականացված ««Արցախյան պատերազմ 2020. կորուստներ, մարտահրավերներ և դիմակայության զարգացման հնարավորություններ» հետազոտության հիմնական եզրահանգումներ» զեկույցի՝ պատերազմից հետո Արցախ վերադարձած Շահումյանի բնակիչների մեծամասնությունը (60.7%-ը) բնակվում է հարևան Մարտակերտում:

Գծապատկեր 2-ի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ դիտարկվող ժամանակահատվածում Արցախում ծնելիության մակարդակը միշտ գերազանցել է մահացության մակարդակը: Ընդ որում, բնական աճի տեմպն Արցախում դիտարկվող ժամանակահատվածում կազմել է միջինը 7‰: Համեմատության համար նշենք, որ Հայաստանում նույն ժամանակահատվածում բնական աճի ցուցանիշը 3.8‰ է: Ընդ որում, 2020 թվականին, նախորդ տարվա համեմատությամբ, 83%-ով նշված ցուցանիշը նվազել է Արցախում, 97%-ով՝ Հայաստանում՝ կազմելով համապատասխանաբար 0.9‰ և 0.1‰:



Գծապատկեր 2. ***Արցախի[15] և Հայաստանի[16] բնական և մեխանիկական աճը (‰), 2012–2020 թթ.***

Մյուս կողմից՝ բնակչության մեխանիկական շարժի ուսումնասիրությունն Արցախում և Հայաստանում 2012–2020 թթ. ընթացքում ցույց է տալիս, որ մինչև 2016 թվականը Արցախ եկողների քանակը գերազանցել է մեկնողների թիվը: 2016 թվականից սկսած, պայմանավորված քառօրյա պատերազ-

[14] Տե՛ս https://www.youtube.com/watch?v=iaT7BEJOXSA

[15] Տե՛ս Արցախի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն, http://www.stat-nkr.am/

[16] Տե՛ս Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, https://armstat.am/am/

մով, Արցախի բնակչության մեխանիկական աճը բացասական ցուցանիշ է արձանագրել՝ 2016–2020 թթ. կազմելով միջինը -1.2‰: Այս առումով, Հայաստանի համեմատությամբ, Արցախի մեխանիկական շարժի ցուցանիշն առավել շահեկան դիրքեր է գրանցել, քանի որ Հայաստանում, դիտարկվող ժամանակահատվածում, բնակչության մեխանիկական շարժի դրական ցուցանիշ արձանագրվել է՝ սկսած 2018 թվականից:



Գծապատկեր 3. ***Արցախ եկողների և մեկնողների թիվը, մեխանիկական շարժը (մարդ), 2012–2020 թթ.***[17]

Համաձայն գծապատկեր 3-ի՝ մինչև 2016 թվականը Արցախ եկողների թիվը միջինում 1.6 անգամ գերազանցել է մեկնողների ցուցանիշը: 2016 թվականից հետո հակառակ պատկեր է: Այսպես՝ 2016–2020 թվականների ընթացքում Արցախից մեկնողներն այստեղ եկողներից, միջին հաշվով, 1.3 անգամ ավելի են: Դժվար է այս պահին գնահատել, թե ինչպես է անդրադարձել 2020 թվականի 44-օրյա պատերազմն Արցախի միգրացիոն համայնապատկերի վրա: Մի կողմից՝ պատերազմի օրերին Արցախը լքած 90 հազար մարդկանց մեծ մասը հետ է վերադարձել է, մյուս կողմից՝ օկուպացված տարածքներից տեղահանվածների բաշխվածության օրակարգային հիմնահարցն է ինչպես Արցախում, այնպես էլ Հայաստանում:



Գծապատկեր 4. ***ՀՀ քաղաքացիների տեղաշարժերի վարչական հաշվառման ընդհանուր բնութագիրն ըստ բնակչության պետական ռեգիստրի գրանցումների***[18]

[17] Տե՛ս Արցախի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն, http://www.stat-nkr.am/

Գծապատկեր 4-ում առկա տեղեկատվության վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ դիտարկվող ժամանակահատվածում 2015 թվականին և 2021 թվականին Արցախի հետ տեղաշարժերի դինամիկան ունեցել է բացասական արդյունք: 2021 թվականին Հայաստանի ներպետական տեղաշարժերի 7.31%-ը բաժին է ընկել Արցախին:

Համեմատության համար նշենք, որ, օրինակ, 2015 թվականին Արցախի հետ տեղաշարժերը կազմել են ՀՀ միջպետական ընդհանուր տեղաշարժերի 23.43%-ը: Դիտարկվող 2015–2021 թվականների ընթացքում ՀՀ միջպետական ընդհանուր տեղաշարժերի մեջ Արցախի մասնաբաժինը, միջին հաշվով, 19.24% է:

Արցախի ժողովրդագրական իրավիճակի համապարփակ գնահատումը պահանջում է օր առաջ իրականացնել մարդահամար՝ քարտեզագրելով մարդկային ռեսուրսներն ու նրանց միգրացիոն տրամադրվածությունը: Անհրաժեշտ է հստակ արձանագրել նաև, որ միգրացիան բավական զգայուն է արձագանքում երկրում տեղի ունեցող գործընթացներին: Արցախում միգրացիոն օրենսդրության բարելավման տեսանկյունից ևս բացեր կան, որոնք հարկ է լրացնել: ԱՀ-ում փախստականների իրավական կարգավիճակի ընդհանուր և հատուկ սկզբունքներն ամրագրված են ԱՀ Սահմանադրության և ոլորտային օրենսդրության մեջ՝ հիմնականում արտացոլելով նրանց կարգավիճակի միջազգային իրավունքի ընդհանուր և հատուկ սկզբունքները, իսկ առկա թերացումներն ու բացերը հնարավոր է շտկել իրավական ակտերի հետևողական, շարունակական փոփոխություններ իրագործելով[19]: Ընդ որում, Արցախում լուրջ հիմնախնդիր է շարունակում մնալ նաև «ապաստան հայցողի» իրավական կարգավիճակի հստակեցման հարցը:

ԱՀ սոցիալական զարգացման և միգրացիայի նախարարությունն իրականացնում է ակտիվ պետական ծրագրեր, որոնք ուղղված են Արցախի Հանրապետությունում մշտական բնակություն հաստատած ընտանիքներին վերաբնակեցման ծրագրով հատկացված բնակարանների, բնակելի տների և տնամերձ հողամասերի՝ սեփականության իրավունքով տրամադրմանը[20]: 2021 թվականի մայիսի 20-ին ՀՀ Կառավարությունն ընդունել է «Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կառավարման հայեցակարգը և գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» որոշումը, որտեղ Արցախից Հայաստան տեղափոխված անձինք դասակարգվել են որպես հարկադիր տեղահանվածներ. անձինք, որոնք իրենց սոցիալական վիճակով փաստացի փախստական են, սակայն չունեն այդ կարգավիճակի համար դիմելու իրավական բնութագրիչներ (օրինակ՝ ՀՀ քաղաքացիություն ստացած սիրիահայերը, Արցախի Հանրապետությունից ՀՀ տեղափոխված անձինք)[21]: Այս թիրախային խմբի համար ՀՀ Կառավարությունը նախատեսել է մի շարք աջակցության ծրագրեր:

---

[18] Տե՛ս Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, https://armstat.am/am/

[19] Տե՛ս **Մխիթարյան Է.,** «Ապաստան հայցողներ», «ներքին տեղահանված անձինք», «հարկադիր վերաբնակված/տեղահանված անձինք» եզրույթները, կարգավիճակները. դրանց իմպլեմենտացիայի անհրաժեշտությունն Արցախի իրավական դաշտում, «Գիտական Արցախ», № 2(9), 2021, էջ 127-139:

[20] Տե՛ս http://mss.nkr.am/?page_id=21851

[21] Տե՛ս https://www.arlis.am/documentview.aspx?docID=155100



Գծապատկեր 5. ***Արցախի ՀՆԱ-ն (մլն ՀՀ դրամ), Արցախի[22] և Հայաստանի[23] ՀՆԱ աճի տեմպերը (%)***

Արցախի տնտեսության հակիրճ նկարագիրը

Գծապատկեր 5-ի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ 2012–2020 թթ. ընթացքում Արցախի ՀՆԱ-ն աճել է տարեկան միջինը 6.7%-ով: Ընդ որում, միայն 2012–2019 թթ. տարեկան աճի միջին տեմպը կազմել է 10.5%: Ավելին, 2012 թվականի համեմատությամբ Արցախի ՀՆԱ-ն 2019 թվականին աճել է մոտ 1.3 անգամ՝ հասնելով 342463.6 մլն ՀՀ դրամի: Պայմանավորված ինչպես 2020 թվականի սկզբում բռնկված COVID-19 համավարակով, այնպես էլ 44-օրյա պատերազմի կործանարար հետևանքներով՝ 2019 թվականի համեմատությամբ Արցախի ՀՆԱ-ն 2020 թվականին նվազել է 21%-ով՝ կազմելով 270907.2 մլն ՀՀ դրամ: Պատերազմի և համավարակի իրական հարվածներն Արցախի տնտեսության վրա գնահատելու համար անհրաժեշտ է արձանագրել, որ 2019 թվականի հունվար-սեպտեմբերի համեմատությամբ 2021 թվականի հունվար-սեպտեմբերին ՀՆԱ-ն նվազել է 25.5%-ով՝ կազմելով 162773.5 մլն ՀՀ դրամ: Հայաստանի ՀՆԱ աճի տեմպի հետ համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ դիտարկվող 2012–2020 թվականների ընթացքում Հայաստանի ՀՆԱ աճի միջին տեմպը կազմել է 3.4%: Ընդ որում, 2020 թվականին, 2019 թվականի համեմատությամբ, Հայաստանի ՀՆԱ-ն կրճատվել է 5.5%-ով՝ կազմելով 6181664.1 մլն ՀՀ դրամ: Մյուս կողմից՝ 2012 թվականի համեմատությամբ Հայաստանի ՀՆԱ-ն 2020 թվականին ավելացել է 44.9%-ով:

2020 թվականին Արցախի ՀՆԱ արտադրության կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պետական կառավարմանը և պաշտպանությանը, պարտադիր սոցիալական ապահովությանը բաժին է ընկել 25.2%-ը, հանքագործական արդյունաբերությանը և բացահանքերի շահագործմանը՝ 13.5%-ը, շինարարությանը՝ 10.4%-ը, գյուղատնտեսությանը՝ 9.4%-ը[24]: Ընդ որում, դիտարկվող 2012–2020 թթ. ՀՆԱ արտադրության կառուցվածքում

[22] Տե՛ս Արցախի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն, http://www.stat-nkr.am/

[23] Տե՛ս Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, https://armstat.am/am/?nid=12&id=01001

[24] Տե՛ս Արցախի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն, Արցախի վիճակագրական տարեգիրք. 2021, http://stat-nkr.am/files/yearbooks/2021/Taregirq_2021_kr.pdf

միշտ գերիշխող դիրք է ունեցել պետական կառավարումը և պաշտպանությունը, պարտադիր սոցիալական ապահովությունը: Արդյունաբերության բաժինը ՀՆԱ-ում 2020 թվականին կազմել է 26.6%՝ 2016 թվականի 16.9%-ի համեմատությամբ: Ամբողջ արդյունաբերության մեջ 46.9%-ը բաժին է ընկնում հանքագործական արդյունաբերությանը և բացահանքերի շահագործմանը: Հատկանշական է, որ 2019 թվականին, 2020 թվականի համեմատությամբ, ցուցանիշը նվազել է 23.1%-ով՝ կազմելով 48394.2 մլն ՀՀ դրամ:



Գծապատկեր 6. ***Արցախի արդյունաբերության արտադրանքի[25], գյուղատնտեսության համախառն արտադրանքի[26] և շինարարության[27] ծավալների տեսակարար կշիռները Արցախի ՀՆԱ-ում***

Գծապատկեր 6-ում առկա տվյալների վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ Արցախի ՀՆԱ-ում դիտարկվող ժամանակահատվածում արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը 2012–2020 թվականների ընթացքում, միջին հաշվով, կազմել է 32.75%: Ընդ որում, 2012 թվականի համեմատությամբ արդյունաբերական արտադրանքի ծավալներն ավելացել են 152.5%-ով՝ կազմելով 103203.2 մլն ՀՀ դրամ: Նույն՝ 2012–2020 թվականների ընթացքում գյուղատնտեսության տեսակարար կշիռը Արցախի ՀՆԱ-ում կազմել է միջինը 27.85%, իսկ շինարարությանը՝ 21.57%: 2012 թվականի համեմատությամբ գյուղատնտեսական ապրանքների ծավալները 2020 թվականին ավելացել են 12.2%-ով՝ կազմելով 56472.5 մլն ՀՀ դրամ, ինչը 20%-ով պակաս է 2019 թվականի ցուցանիշից: Ինչ վերաբերում է շինարարության ծավալին, ապա 2012 թվականին համեմատությամբ այս ցուցանիշն ավելացել է 31.3%-ով՝ կազմելով 50269.3 մլն ՀՀ դրամ, որը ևս, նախորդ տարվա պատերազմի և համավարակի պատճառով, կրճատվել էր 22.2%-ով:

Աղյուսակ 1-ում ներկայացվել են Արցախում ինչպես առևտրի շրջանառության, այնպես էլ ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների ծավալները: Այսպես՝ տվյալների վերլուծության արդյունքում կարող ենք արձանագրել, որ դիտարկվող 2012–2020 թվականների ընթացքում առևտրի շրջանառությունը երկու անգամ է արձանագրել բացասական աճի տեմպ: 2016 թվականին, պայմանավորված քառօրյա պատերազմով, նախորդ տարվա համեմատությամբ առևտրի շրջանառության ծավալները նվազել են 14.4%-

[25] Տե՛ս http://stat-nkr.am/hy/component/content/article/762-2017-11-02-11-14-14
[26] Տե՛ս http://stat-nkr.am/hy/component/content/article/766-2017-11-03-12-46-45
[27] Տե՛ս http://stat-nkr.am/hy/component/content/article/758-2017-10-24-13-13-06

ով, իսկ 2020 թվականին, դարձյալ պատերազմի պատճառով, առևտրաշրջանառությունը նախորդ տարվա համեմատությամբ կրճատվել է 31.4%-ով՝ կազմելով 92107.4 մլն ՀՀ դրամ: Միևնույն ժամանակ, 2021 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2019 թվականի նույն ժամանակահատվածի համեմատությամբ, առևտրաշրջանառության ծավալները կրճատվել են 41.7%-ով՝ կազմելով 53934.1 մլն ՀՀ դրամ:

Աղյուսակ 1

Առևտրի շրջանառության, ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների ծավալներն Արցախում[28]

Տարի	Առևտրի շրջանառությունը (մլն դրամ)	Բեռնափոխադրումների ծավալ (հազար տոննա)	Ուղևորափոխադրումների ծավալ (հազար մարդ)
2012	105044.3	873.4	20887.8
2013	113508.3	1415.6	21175.8
2014	116260.1	1072.1	22526.8
2015	116343.7	909.1	24686.4
2016	99559.2	963.5	26775.9
2017	114177.7	846.8	20232.9
2018	120878.3	1031.7	20907.4
2019	134240	1140.7	22170
2020	92107.4	756	12311.1

Բեռնափոխադրումների և ուղևորափոխադրումների ծավալների վերլուծությունը ցույց է տալիս, որ ինչպես ուղևորափոխադրումների, այնպես էլ բեռնափոխադրումների ծավալները 2019 թվականի համեմատությամբ 2020 թվականին կրճատվել են համապատասխանաբար 44.5% և 33.7%՝ կազմելով 12311.1 հազար մարդ ու 756 հազար տոննա: Արցախում բեռնափոխադրումների ծավալները 2021 թվականի հունվար-սեպտեմբերին, 2019 թվականի նույն ժամանակահատվածի համեմատությամբ, կրճատվել են 43.5%-ով՝ կազմելով 430.6 հազար տոննա, իսկ ուղևորափոխադրումների ծավալը՝ 63.6%-ով՝ կազմելով 6014 մարդ[29]: Ընդհանուր առմամբ, 2014–2020 թվականներին աղքատության միջին մակարդակն Արցախում կազմել է 22.7%: 2019 թվականի համեմատությամբ 2020 թվականին ժամկետանց վարկերն ավելացել են 18%-ով՝ կազմելով 762.7 մլն ՀՀ դրամ:

Երկրում սոցիալ-տնտեսական իրավիճակն ավելի համապարփակ ներկայացնելու, դրա միգրացիոն դրդապատճառներն առավել խորքային գնահատելու համար համադրական վերլուծության ենք ենթարկել երկու ցուցանիշ՝ աղքատության մակարդակը և ժամկետանց վարկերը: 2020 թ. ԱՀ-ում աղքատության մակարդակը կազմել է 21.4%, իսկ ծայրահեղ աղքատության մակարդակը՝ 4.2%: Աղքատների ընդհանուր թվի մեջ 19.6%-ը ծայրահեղ աղքատ են: Ինչպես վերը նշվեց, աղքատության խորությունը 2020 թ. համար գնահատվել է 3.9%, իսկ աղքատության սրությունը՝ 1.3%: Աղքատությունը 2020 թ. տարբերվում է ըստ քաղաքային (22.9%) և գյուղական բնակավայրերի (19.7%):

---

[28] Տե՛ս http://www.stat-nkr.am/

[29] Տե՛ս Արցախի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն, Արցախի սոցիալական պատկերը և աղքատությունը. 2021, http://stat-nkr.am/hy/2010-11-24-11-24-22/1355-2021



Գծապատկեր 7. ***Արցախի նվազագույն աշխատավարձը, Արցախի[30] և Հայաստանի[31] միջին ամսական անվանական աշխատավարձերը (ՀՀ դրամ)***

Ներկայացված ցուցանիշները ևս մեկ գործիք են՝ բացատրելու համար Արցախի միգրացիոն իրավիճակը, քանի որ, ինչպես գիտենք, միգրացիան բավական զգայուն է սոցիալ-տնտեսական գործընթացների նկատմամբ: Փաստորեն, տնտեսական աճի բացասական տեմպը, տնտեսական տարբեր ցուցանիշների բացասական միտումները ևս պայմանավորում են միգրացիոն առկա գործընթացներն Արցախում: Արցախում և Հայաստանում աշխատավարձերի չափի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Արցախում նվազագույն աշխատավարձը 2012 թվականի համեմատությամբ 2020 թվականին ավելացել է 109.2%-ով՝ կազմելով 68000 ՀՀ դրամ: Համեմատության համար նշենք, որ Հայաստանում ևս 2020 թվականի հունվարի 1-ից նվազագույն ամսական աշխատավարձը 2019 թվականի 55000 ՀՀ դրամից բարձրացել է՝ կազմելով 68000 ՀՀ դրամ[32]: Ինչ վերաբերում է միջին ամսական անվանական աշխատավարձին, ապա դիտարկվող 2012–2020 թվականների ընթացքում աճել է տարեկան միջինը 7%-ով, Արցախում՝ 8.1%-ով:

2012 թվականի համեմատությամբ 2020 թվականին Հայաստանում և Արցախում միջին ամսական անվանական աշխատավարձերն աճել են 67.6%-ով և 83.9%-ով՝ կազմելով համապատասխանաբար՝ 189716 ՀՀ դրամ և 188960 ՀՀ դրամ: Միջին ամսական անվանական աշխատավարձն Արցախում 2021 թվականի հունվար-սեպտեմբերին կազմել է 198747 ՀՀ դրամ, ինչը 15.6%-ով գերազանցում է 2019 թվականի հունվար-սեպտեմբերի ցուցանիշը: Ընդհանուր առմամբ, գծապատկեր 7-ում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ, ինչպես նվազագույն, այնպես էլ միջին ամսական անվանական աշխատավարձերը Հայաստանում և Արցախում, որպես այդպիսին, մեծ տարբերություններ չեն դրսևորում, ինչը կարևոր հանգամանք է դիտարկվող տարիներին Արցախում արձանագրված դրական մեխանիկական շարժի համար:

---

[30] Տե՛ս Արցախի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն, http://stat-nkr.am/hy/component/content/article/762-2017-11-02-11-14-14

[31] Տե՛ս Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, https://armstat.am/am/?nid=12&id=08001

[32] Տե՛ս ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, https://www.mlsa.am/?p=24151

Եզրակացություն: Միգրացիոն գործընթացները յուրաքանչյուր երկրի ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական զարգացման մեջ կարևոր դեր են խաղում: Միգրացիան տնտեսական երևույթ է, որի օգնությամբ պետությունը սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր փուլերում կարողանում է լուծել աշխատաշուկան աշխատանքային միջոցներով ապահովելու խնդիրները, նվազեցնել գործազրկությունը, ավելացնել ներդրումները: Տարիների ընթացքում էականորեն փոխվել են ԱՀ միգրացիոն գործընթացները, դրանց պատճառներն ու հետևանքները, դրանցում ներգրավված խմբերն ու նրանց խնդիրները: Այս փոփոխությունների վրա էական ազդեցություն են թողել 2020 թվականի 44-օրյա պատերազմն ու COVID-19 համավարակը:

Միգրացիոն իրավիճակն Արցախում բավական սուր է, իսկ էմիգրացիայի լայնածավալ առկայությունը սպառնում է ապաբնակեցման հեռանկարով: Արցախի ժողովրդագրական հիմնախնդիրների դիտանկյունից՝ միգրացիայի ընթացիկ իրավիճակի և հիմնական միտումների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ պատերազմից հետո Արցախի բնակչությունն ունի միգրացիոն հակվածություն: Հատկապես երիտասարդների և բարձր որակավորում ունեցող կադրերի միգրացիան ի հայտ է բերում լուրջ մարտահրավերներ: Արցախում բնական հավելաճի գործակիցն անկում է ապրում, վերարտադրողական տարիքում գտնվող կանանց և տղամարդկանց թիվը, աշխատանքային ռեսուրսները նվազում են: Մյուս կողմից՝ Արցախում բնակչության ներքին միգրացիայի միտում կա՝ հատկապես գյուղական բնակավայրերից դեպի քաղաքներ: Այս ամենը ժողովրդագրական «համաճարակի» դեմ պետական քաղաքականության «ճակատային հարձակման» մեխանիզմների կիրառումը դարձնում է հրատապ: Այս համատեքստում, Արցախում մեծ կարևորություն ունի, առաջին հերթին, մարդահամարի իրականացումը՝ գնահատելու համար ժողովրդագրական ընթացիկ իրավիճակը՝ հատկապես միգրացիոն տրամադրվածությունն Արցախում: Բացի այդ, առանցքային նշանակություն ունի նաև միգրացիոն օրենսդրական դաշտի բարելավումը, ինչը հնարավորություն կտա օրակարգային խնդիրների լուծման ամուր նորմատիվային հենք ունենալու: Միգրացիոն իրավիճակի վերլուծության արդյունքում հստակ կարելի է արձանագրել, որ Արցախում անհրաժեշտ է որդեգրել ժողովրդագրական նոր քաղաքականություն, ինչի համատեքստում կարևոր է ժողովրդագրության ռազմավարության մշակումը: Ժողովրդագրության համապատասխան ռազմավարությունը հնարավորություն կտա թիրախային հայեցակարգային մոտեցում ցուցաբերելու Արցախի միգրացիոն հիմնահարցին:

Օգտագործված գրականություն

1. Արցախի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն, *http://www.stat-nkr.am/*
2. *«Արցախյան պատերազմ 2020. կորուստներ, մարտահրավերներ և դիմակայության զարգացման հնարավորություններ»* հետազոտության հիմնական եզրահանգումներ, Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիա, Եր., 2021:
3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 20-ի՝ *«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Վարչապարած-*

քային բաժանման միավորների դասակարգիչ» ընդունելու մասին» N 106-Ն հրամանը:
4. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, *https://armstat.am/am/*
5. Միքայելյան Հ., *Արտաքին միգրացիան Հայաստանում. միտումները, ուղղությունները, թվաքանակը,* http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=6836#19_b
6. Մխիթարյան Է., *«Ապաստան հայցողներ», «ներքին տեղահանված անձինք», «հարկադիր վերաբնակված/տեղահանված անձինք» եզրույթները, կարգավիճակները. դրանց իմպլեմենտացիայի անհրաժեշտությունն Արցախի իրավական դաշտում,* «Գիտական Արցախ», № 2(9), 2021:
7. Մխիթարյան Է., *Փախստականների իրավական կարգավիճակը Արցախի Հանրապետությունում,* Գիտական Արցախ, № 1(8), 2021:
8. Collier P., *Post-conflict Recovery: How Should Strategies Be Distinctive?* Journal of African Economies, Vol. 18, AERC suppl.1, 2009.
9. Moon B., *Paradigm in migration research: exploring morning as a schema.* Progress in Human Geography, V.19, No. 4, 1995.
10. Sklias P., Roukanas S., *Development in Post-Conflict Kosovo,* South-Eastern Europe Journal of Economics, 2, 2007.

ТАТЕВИК ВАРДАНЯН
Преподаватель кафедры международных экономических отношений АГЭУ

ТИГРАН МИКАЕЛЯН
Аспирант кафедры международных экономических отношений АГЭУ

Комплексный анализ миграционной ситуации Республики Арцаха[33].– Основной целью статьи является оценка миграционных процессов в Арцахе в демографическом контексте. Основной задачей статьи является проведение комплексного анализа миграционной ситуации в Арцахе в результате изучения и анализа численности населения Арцаха и Армении, а также годовых темпов прироста населения, естественного и механический роста, количества людей, приезжающих в Арцах и уезжающих из Арцаха. В данном контексте посредством методов анализа исторических рядов, сравнительного анализа, авторы представили миграционные процессы в Арцахе, сопоставляя их с демографическими процессами. Колебание численности постоянного населения Арцаха и Армении показало, что темпы ежегодного прироста населения в Арцахе выше, чем в Армении. Причем то же самое

[33] Статья опубликована в рамках краткосрочной грантовой программы по арменоведению, финансируемой Фондом Галуста Гюльбенкяна.

можно зафиксировать как для естественных, так и для механических показателей роста. В целом анализ миграционной ситуации в Арцахе показывает, что причины и последствия миграции менялись с годами. Последний, самый существенный фактор – развязанная Азербайджаном 27 сентября 2020 года 44-дневная война, влияние которой на миграционные настроения арцахцев наблюдаются до сих пор.

Ключевые слова: *Арцах, Армения, демографическая ситуация, миграция, постоянное население, естественное движение, механическое движение, 44-дневная война*
JEL: O15, R23
DOI: 10.52174/1829-0280_2022.2-146

TATEVIK VARDANYAN
Lecturer of the Chair of International Economic Relations of ASUE

TIGRAN MIKAYELYAN
PhD Student of the Chair of International Economic Relations of ASUE

Comprehensive Analysis of the Migration Situation of the Republic of Artsakh[34].– The main purpose of the paper is to assess the migration processes in Artsakh in a demographic context. The main objective of the research is to conduct a comprehensive analysis of the migration situation in Artsakh as a result of studying and analyzing the de jure population of Artsakh and Armenia, as well as the annual population growth rate, natural and mechanical growth, the number of people arriving and leaving Artsakh. In this context, through the methods of analyzing historical series, comparative analysis, the authors presented the migration processes in Artsakh, combining them with the processes taking place in the demographic situation. The movement of the population of Artsakh and Armenia has shown that the rate of annual de jure population growth in Artsakh is higher than in Armenia. Moreover, the same can be recorded for both natural and mechanical growth indicators. In general, the analysis of the migration situation in Artsakh shows that the causes and consequences of migration have changed over the years. The last, most significant factor is the 44-day war unleashed by Azerbaijan on September 27, 2020, the influence of which on the migration propensity of the Artsakh people continues to this day.

Keywords: *Artsakh, Armenia, migration, de jure population, natural movement, mechanical movement, 44-day war*
JEL: O15, R23
DOI: 10.52174/1829-0280_2022.2-146

[34] The article was published within the framework of a short-term grant program on Armenian Studies funded by the Calouste Gulbenkian Foundation.